

24545

ՊՐՈՖԻԼԿԱՏԵՐ ՀԱՌՈՒ

ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱԶՊԵՍ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ
ԿԱՌՈՒՑՈՂԻՆ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ
ԲԱՄԱԿ

(Զրուցներ բանվարիների հետ)

ԱՐԱՐԱՏԻ
ԻՆՍԻՏՈՒՏԻ
ՀԱՅՈՒՅԵԴԻ
Ակադեմիա
ԽՍՀՄ

ՀՀՎ.ՅՅ.ԲՈՒԼՈՒԹՅՈՒՆ

Կառուցող բանվարին պահպանական համար
ԿԵՎԱԼԱՐՈՒԹՅԱՆ

ՀԵՐԵՎԱՆ

331.88

Ը/1930/1225
n 1 MAR 2010

ՀԱ 1910

ՀՕԹՈՒՈՒԹԵՆՑԵՆ ԿԵՐՈՒՑԱՎ ԲԽԵՎՈՐՆԵՐԻ
ՈՐՀՄՈՒԹՅՈՒՆ

331.88

Մ-77

ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ
ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԿԱՌՈՒՑՈՂԻՆ
ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(Զբուգներ բանվորների հետ)

Թեմատիկ խմբակների
աշխատանքի ծրագիր
և նյութեր

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОДНОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՀՐԱՄԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿԱՌՈՒՑՈՂ ԲԱՆԿՈՐԵՐԻ ԱԼՀԱԴՐՈՎԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿԵՆՏՐԱԿԱՊՈՒՅՑԱՆ

02 JUL 2013

29575

Համաձայնեցրած և ՀԱՄԿԽ-ի
կուլտ-բաժնի հետ:

ՀԱՅԹՈՒԵԳՐԱՖԻ I ՏՊԱՐԱՆ
ԹԱՏՎԵՐ 1041
ԳՐԱԴՐԱՆ. 1604 Բ., ՏԻՐ. 1000



59432-66

«Միությունը և պետությունը ինչպես
են ապահովում կառուցողին գործազրկու-
թյան ժամանակ» թեմատիկ խմբակի ծրա-
դիրը նկատի է առնված յերեք պարապ-
մունքի համար։ Պարապմունքը կարող ե
տեղի ունենալ յերեք որվա ընթացքում
միմիանց հետեւից կամ մի շաբաթվա ըն-
թացքում, ընդունելով, վոր կառուցող բան-
վորը պարապմունքների ընդմիջումներին
կարող ե զրուցի վերաբերյալ դեկավարի
կողմից ցուց տված լրացուցիչ գրականու-
թյուն կարգալ։ Պարապմունքները ավելի
յերկար ժամանակով ձգձգելը աննպատա-
կահարմար է, վորովհետեւ յուրանչչուր զը-
րուց սերտ կապված է մեկը մյուսի հետ
և յեթե պարապմունքների ընդմիջումները
յերկարատեղ լինեն, նաարավոր չի լինի
պարապողների կազմի միատեսակություն
պահպանել։

«Միությունը և պետությունը ի՞նչպես
են ապահովում կառուցողին գործազրկու-
թյան ժամանակ» թեման ընդգրկում և 3
հիմնական խնդիր՝

1) գործազրկությունը մեր միության
անդամների մեջ և ԽՍՀՄ գործազրկության
բնույթը,

2) գործազրկության դեմ պալքարե-
լու միջոցները,

3) միության ոգնությունը գործա-
զրկներին:

Խմբակի աշխատանքի նպատակն են
վորոշելով գործազրկության բնույթը և. Ս.
Հ. Մ-ում և նաևնավորապես կառուցողնե-
րի միության մեջ՝ ուկնդիրներին հնարա-
վորություն տալ ըմբռնելու գործազրկու-
թյունը ամբողջովին վերացնելու հեռանկար-
ները։ Միենուն ժամանակ լերկորդ և յե-
րարդ զբույցներում պետք է պարզել պե-
տության և արհեստական միություն-
ների կողմից գործազուրկներին ցուց
աված ոգնության բնույթը, գործազրկու-
թյունը մեղմելու համար ձեռք առած մի-
ջոցները, ինչպես և բացատրել ուկնդիրնե-
րին աշխատանքի շուկալի կանոնավորման

ձևերը և խնդիրները։ Խմբակի ղեկավարնե-
րին վորապես ձեռնարկի, կարելի յե հանձնա-
րարել «Պրոֆգրագիտության ձեռնարկ»
մաս 1, «Պրոֆգրագը տանը» III-րդ պրա-
կը, 2-րդ հրատարակություն, ինչպես և
«Կենտկոմի հաշվետվությունը կտորուցող-
ների VІІ-րդ համագումար» «Միության կենտ-
կոմի 8/XI—26 թ. III-րդ և IV-րդ նոտա-
ցրջանների և կառուցողների միության
VІІ-րդ համագումարի բանաձեռքը գործա-
զրկության հարցի մասին։ Ավելի պատ-
րաստված խմբակավարներին կարելի ե
հանձնարարել Յա. Գինդինի «Աշխատանքի
շուկալի կանոնավորումը և պալքար գոր-
ծազրկության դեմ» բրոշուրը։ Տվյալ ծրա-
գիրը կարելի յե ոգտագործել նաև հանրա-
կացարաններուն և կարմիր անկյուններում
գործազուրկների հետ մասսայական զրույց-
ներ ունենալիս։

ԶՐՈՒՅՑ ԱՌԱՋԻՆ

Գործագրելու թյունը մեր միտոքյան մեջ յեզ
գործագրելու թյան բնույնը ԽՍՀՄ-ում

ԶՐՈՒՅՑԻ ԾՐԱԳԻՐԸ

Գործագրելու թյունը կառուցող բանվորների մեջ

Կառուցողական աշխատանքների պայ-
պանները։ Կառուցողական աշխատանքների
սեղոնային բնույթը։ Կառուցող բանվորնե-
րի կազմը։ Բանվորական ուժի հոսանքը
դեպի քաղաքները շինարարական սեղոնի
սկզբներին։ Կառուցողական արդիունագոր-
ծության մեջ առաջ յեկող գործազրկու-
թյան պատճառները։ Գործազրկների կազ-
մը։

Գործագրելու պահանջները Խ. Ս. Հ. Մ.-ում
ԽՍՀՄ-ի ժողովրդական անականության
աճումը։

Արդիունագործության մեջ զբաղված
բանվորների թվի մեծանալը։

Գյուղղը վորպես նոր բանվորական ու-
ժի աղբյուր։ Նոր բանվորական ուժի հո-
սանքը դեպի քաղաքները։ Ինչու գյուղա-
ցիք գնում են բաղաք աշխատանքի։ Նոր
կաղրեր՝ գյուղացիներ, լերիտասարդություն
և կանալք։ Գործազրկների հիմնական
կազմը անվորակ բանվորներն են։

Գործագրելու թյունը վերացնելու հանապարհ-
երը

Գործազրկության վերացումը հնարա-
վոր ե միայն ԽՍՀՄ-ի տնտեսության հե-
տագա աճման դեպքում։ Գյուղական տըն-
տեսության մեջ յեղած ձեռնարկումները
ավելացնում են բանվորական ուժի պա-
հանջը գյուղում։ Մեր պետական արդյու-
նագործության զարգացումը։ Նոր շինարա-
րություն՝ արդյունագործական, կոմմունալ,
ելեքտրոկառուցում (Քնեպրոստրու), հաղոր-
դակցության ձանապարհներ (Թուքստան-
Սիբիր ձանապարհը, Վոլգա-Դոն ջրանցքը և
այլն)։ Յոթ ժամյա բանվորական որվա-
նշանակությունը գործադրկությունը վերաց-
նելու գործում։ Գյուղական ազգաբնակու-
թյան ավելորդ մասի տեղափոխությունը։

Զոռույցի չիմնական բովանդակությունը

Այս պարագմունքը պետք է լուսաբանի լերեք հիմնական խնդիր՝ գործազրկությունը կառուցող բանվորների մեջ, գործազրկության ընդհանուր բնույթը Խ. Ս. Հ. Մ.-ում և գործազրկության վերացման ձանապարհները:

Գործազրեկությունը կառուցող բանվորների մեջ

Կառուցողական արտադրությունը առավելապես սեզոնալին բնույթ է կրում, աշխատանքները կատարվում են գլխավորապես ամառվա ընթացքում (շենքերի կառուցում և վերակառուցում, ճանապարհների և փողոցների վերանորոգում, լերկաթուղիների վերանորոգում և նորերն անցկացնել և այլն) կառուցողական արտադրության աշխատանքների սեզոնալին բնույթի հետևանքով բանվորական ուժի մեջ մշտական տատանումներ են նկատվում։ Ամառվա ընթացքում բանվորներն աշխատում են կառուցումների վրա, իսկ ձմեռընթանց մեծ մասը գնում է տուն-գյուղը, մեկ մասն ել մնում է բաղաքներում։ Կառուցող բանվորների մեծ մասը դուրսը աշխատանք

ֆնարող գյուղացիներ են, վորոնք գյուղուն ունեն իրենց տնտեսությունը։

Սեզոնի սկզբին (մարտ-ապրիլ ամիսներին) սեզոնալինները դալով քաղաք և հաշվառման լենթարկվելով աշխատանքի բորսայում, ավելացնում են գործազրուրկ բանվորների թիվը (տես աղյուսակի ապրիլ ամսվա թվերը):

Միջսեզոնային աշխատանքների շրջանում կառուցող բանվորները գործազրուրկ են։ Այս գործազրկությունը հարկադրական բնույթ է կրում և խիստ պակասում է կառուցման աշխատանքների շրջանում։ Այսպես, որինակ, 1927 թ. տվյալներով, մենք ունենք գործազրուրկ կառուցողների թիվը հետևյալ տատանումները, բայց ամիսների Հունվար 227.099 մարդ կամ միութ. անգ.՝ 37.9 /_o Ապրիլ . 267.096 » » » 42 8 /_o Հուլիս . 126.823 » » » 15 5 /_o

Կառուցող բանվորների մեջ սեզոնի սկզբին տեղի ունեցող գործազրկության խիստ աճման վրա ազդում է շինարարական աշխատանքների անժամանակ սկսելը, վորը լերկարացնում է հարկադրական գործազրկության տեսլությունը և առաջ ե

բերում սեղոնալինների անկազմակերպ հոսանք դեպի քաղաք, ուր առանց այդ ելքանվորական ուժ շատ կա, այն ժամանակ, յերբ ուրիշ կենտրոններում կառուցող բանվորների խիստ պակաս ե զգացվում:

Ենորհիվ բանվորների այդպիսի անկազմակերպ հոսանքի, մի քանի քաղաքներում գործազուրկներ են կուտակվում, իսկ մուսաներում կանգ են առնում աշխատանքները, կառուցող բանվորների պակասության կամ փորոշ վարակավորման կառուցողներ չինելու հետևանքով:

Գյուղից յեկող գործազրկության և հեռացող բանվորական ուժի հետ միատեղ, միությունը ունի գործազուրկների կաղրեր (մինչև 50 տոկոսը բոլոր գործազուրկների), վորոնք կտրել են իրենց կազը գյուղի հետ և ամբողջ տարին ապրում են քաղաքներում: Այդ գործազուրկները վորակավոր կառուցող բանվորներ են, վորոնք պրոլետարացել են, վորոնք բացի իրենց վարձու աշխատանքից, ապրուստի վորեւ այլ միջոց չունեն:

Գործազուրկների կազմը, ըստ պլոտինիսիաների, միանման չե: Որինակ, բոլոր

գործազուրկների 2 տոկոսը սևագործներ են, 9,5 տոկոս հյուսներ, 4,9 տոկոս ներկարարներ, 3,6 տոկոս վորմնադիւներ, 1,5 տոկոս ձեղունազործներ (տանիք շնողներ) և այլն:

Գործագրկության պատճառները ԽՍՀՄ-ում

Այն ժամանակ, յերբ աճում ե ժողովրդական տնտեսությունը և ծագկում ե սոցիալիստական խոշոր արդյունագործությունը, կազմելով յերկրի խոշոր արդյունագործության ամբողջ արտադրանքի 25,5 տոկոսը, գործազրությունը ԽՍՀՄ-ում կարծես թե հակասում ե մեր տնտեսական աճման: Ահա հենց այդ թվացող հակասության մեջ ել կազմնում ե մեր գործազրկության առանձնահատկությունը:

Հակառակ կապիտալիստական յերկրներում գոյություն ունեցող գործազրկության, մեր գործազրկությունը ինդուստրիալ բընությունը կրում: Գործազրկուրկների խոշոր տոկոսը կազմում էն սեղոնալին աշխատանքների հետ կապված բանվորները, սևվագործները և ինտելիգենտ աշխատավայրները (խորհրդային ծառայողներ, լուսավորու-

Թյան աշխատավորներ և բժշկական աշխատավորներ), Այսպես, 1 միլիոն 428 հազար գործադուրկներից 359,924 հոգի (25,2 տոկոս) յերեք վարձու աօշխատանք չեն կատարել: Բացի դրանից, գործադուրկների ընդհանուր թվից 147,111 հոգի (10,3 տոկոս) սեղոնայիններ են: Ովքե՞ր են հապա, վոր գլխավորապես մեծացնում են գործադուրկների խմբերը:

Ցարական կառավարության քաղաքականության հետևանքով՝ վորը հողերը պարզեն եր տալիս կալվածատերերին, վաճքերին և իր մերձավորներին, վորը լավագույն հողերը հատկացնում եր զուղի կույակության՝ գլուղացիության մեծամանությունը, առավելապես կենտրոնական Ռուսաստանի և միջին սևահող շրջանների գյուղացիությունը, այնպիսի խզճուկ և անհարմար հողաբաժիններ եր ստանում, վոր ստացված բերքով գլուղացու ընտանիքը չեր կարող կերակրվել:

Հոկտեմբերից հետո հրատարակված հողային գեկրետը միանգամայն փոխեց հողային բոլոր կարգերը, բայց ցարական ազքարային (հողային) քաղաքականության

հետևանքով առաջացած բնակչության վերաբնակեցումը դեռ ևս չի վերացած: Դյուզական ազգաբնակությունը ավելանում ե, և գյուղացիությունը, մանավանդ սահմանափակ հողաբաժին ունեցող շրջաններում, ուր ազգաբնակության ավել մասը չի կարողանում գործադրել իր բանվորական ուժը՝ կամ փոխադրվում ե ազատ հողամասեր ունեցող վայրեր (Ուրալ Սիբիր, Հեռավոր Արևելք) կամ գնում ե քաղաք աշխատանքի: Միաժամանակ, գյուղատնտեսական արտադրության ցածր կուլտուրական մակարդակի, մեծ աշխատանքվերցնող կաւլառության թուց մշակման, հողագործության անբավարար մեքենացման, տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների քիչ գործածություն հետեւանքով, ԽՍՀՄ-ի գյուղատնտեսության բերքը ավելի ցածր ե, քան այլ լեռկրներում, հետևաբար և բանվորական ուժի պահանջը գյուղում ավելի պակաս ե:

Այդ հողի վրա նկատվում ե, վոր գյուղացիները, մանավանդ սակավաբերք և սակավանդ նաև դների գյուղացիները, գաղթում են գեղի քաղաք այլ աշխատանքների:

Վերջին Յ տարիների ընթացքում մենք
նկատում ենք բանվոր դասակարգի բուռն
աճում: Արհեստակցական միությունների
մեջ կազմակերպված բանվորների թիվը ավել-
լացել է համարյա Յ միլիոնով, իսկ զբաղ-
ված բանվորական ուժի ընդհանուր թիվը
հասնում է մինչև 10 և կես միլիոնի: Այդ
հավելումը կատարվում է գլխավորապես ի
հաշվի գյուղից լեկող բանվորական ուժի:
Յուրաքանչյուր տարի գյուղերից ԽՍՀՄ-ի
քաղաքներ են գալիս մինչև 2 և կես միլ-
իոն գյուղացիներ, վորոնց զգալի մասը,
գյուղում ազգաբնակության վերաբնակեց-
ման և քաղաքում աշխատողների նյութա-
կան դրության բարելավման հետևանքով,
մասամբ գործի յեն անցնում քաղաքացին
հիմնարկների սեղոնալին տշխատանքներում,
մասամբ ել մնում են գործազուրկ: Այսպես
որինակ, այդ կազմերի հաշվին, ՀԱՄԿԽ-ի
տվյալների համաձայն, 2 և կես տարվա
ընթացքում (1927 թ. 1/Խ մինչև 1927 1/V)՝
փայտագործների միության անդամների
թիվը ավելացել է 31.900 մարդով, մա-
սամածագործներինը՝ 269.100 մարդով, կա-
ռուցողներինը՝ 275.700 մարդով և այլն:

Վերջին տարիների ընթացքում առաջ
ե լեկել նոր բանվորական սերունդ՝ դա
բանվորների յեվ ծառայողների յերեխա-
ներն են, վորոնց ճնշող մեծամասնությու-
նը վոչ մի վորակավորում չունի, առաջշեն
աշխատել, բայց առաջարկում են իրենց
աշխատանքը: 1923 թվի հունվարից սկիզբ
1926 թ. ապրիլ միությունների անդամ
անշափահասների թիվը աճել է 119.473
մարդով, ըստ վորում վերջին տարվա ըն-
թացքում գործազուրկանշափահասների թի-
վը (առավելապես միության անդամներ են)՝
ավելացել է 53.000 մարդով:

Գյուղից լեկած բանվորական ուժի և
մեծացող բանվոր-լերի տասաարդների հետ
միատեղ, գործազուրկների այս կազ-
մերը ավելանում է առաջներում լերբեք
չաշխատած ինտելիգենցիայով, ըստ վո-
րում գործազուրկների այս խումբը
բաղկացած է առավելապես կանացից: Ազ-
գաբնակության վերաբնակեցումը քաղաք-
ներում, տղամարդուց տնտեսապես անկա-
խանալու ձգտումը կանաց մզում և աշ-
խատանք փնտրելու: Գյուղաթյուն ունեցող
պալմաններում, լերբ ժողովրդական տնտե-

սութիունը կարիք ե զգում առավելապես
վորակավոր ուժերի, կանալք, վոր խոշոր
մեծամասնությամբ անվօրակավոր են, լըց-
նում են զործազուրկների շարքերը։ Մյուս
կողմից, նկատվում ե քաղաքի, բնակիչների
սոցիալական դրության փոփոխություն։

Սոցիալիստական արդյունագործութիւնն
և առևտրի աճումը, Նրանց անկասկած գե-
րակշռությունը մասնավոր կապիտալի վրա
քաղաքներում, քայլքայում են մասնավոր
ֆիրմաները, վորոնց տերերը անգործ մը-
նալով, դաւնում են վարձու աշխատանք
փնտրողներ։ Վերջին յերեսութը անխուսա-
փելի հետեանք է յերկրի ներսում մասնա-
վոր կապիտալի վրա սոցիալիստական ար-
դյունագործության ունեցած հաղթա-
նակի։

Այսպիսով, մեր գործազրկությունը
ինդուստրիալ բնույթ չի կրում, այլ հետեւ-
վանք ե յերկրի վերաբնակեցման։ Գործա-
զրկության բնական վերացումը կապված է
յերկրի ինդուստրացման իրագործման,
մեր տնաեսության հետագա աճման, գոր-
ծազուրկների վորակի բարձրացման հետ՝

Համեմատ ԽՍՀՄ-ի ժողովրդական անտեսության պահանջի:

Գործադրկություններ վերացնելու հանապարհ-
ները

Հիմք չկա սպասելու, վոր գործազրկությունը մեզանում, վոր շափով վոր մեր գործազրկությունը ինդուստրիալ բնույթի կրում, կվերանա մոտ ապագայում, Սահայն, ինչպես արհեստակցական միությունների, նույնպես և խորհրդային իշխանության աշխատանքային մարմինների ձեռք տուած բոլոր միջոցները ուղղված են մեղմելու և թուլացնելու գործազրկությունը։ Վորպեսզի գործազրկությունը ամբողջովին վերանա, անհրաժեշտ ենք կարատե ու համառ պայքար մղել մեր յերկրի տնտեսության հետագա աճման համար։ «Գործազրկությունը զիմափորապես կոտպած լինելով զյուղի բնակչության քայլ զերազանց լինելու հետ, անբուսափելիութենք յերկարատեղ բնույթ կոնենաւան վերացման կարգոր հանապարհներն են դիսանում են առաջին՝ զյուղական և ներքության այնպիսի միջոցներ, Պարօնե



ավելացնեն բանվորական ուժի պահանջը
(ոգնություն գյուղի շխափորության, մեծ
աշխատանքի պահանջող կուլտուրաների սր-
չակաման ուժեղացում, գյուղական տնտե-
սության բարգավաճում, նրա կոլեկտիվա-
ցուր, վերաբնակեցումը յեզ այլն) յեզ
յերկրորդ՝ ինդուստրիալի գորգացումը»:

(Ռիկով)

Խորհրդադիմության մեջ բանվորա-
կան ուժի հետագա կանոնավորումը ընթա-
նալու յե ծավալվող արգունաբերության
մեջ յեղած գործազուրկ բանվորական ուժը
ռդապարձելու ձևապարհով:

Սկսվել ե խոշոր շինարարությունը
(Դսեպրոցինը, որինակ), ընդարձակվում է
կոմմունալ շինարարությունը (բնակարա-
նային շինարարությունը, քաղաքային բա-
րեկարգում), կառուցվում են մի շարք
հակա գործարաններ, ծրագրվում են նոր
ջրային սխատեմներ (Վոլգա-Դոն ջրանցքը)
և յերկաթուղիներ:

Այսպես, որինակ, Պետականի 1927 թ:
հսկիչ թվերը նախատեսնում են յերկա-
թուղային շինարարության ընդարձակումը,
վորի համար հատկացվելու յե մոտ 100 մի-

լիոն ոռությի: Բոլոր այդ կառուցումները, վո-
րանք վոչ թե ժամանակավոր, այլ մշտա-
կան բնույթ են կրում և հետագայում ըն-
դարձակվելու յեն, կապահանջեն զգալի թը-
վով բանվորներ:

Նախատեսնվում ե նաև տնայնագոր-
ծական արգունաբերության ընդարձակում,
գլխավորապես կոոպերացված ձեերով:

Գործազրկության վերացման գործում
խոշոր դեր կտաղաքարդյունագործությունը
Դ ժամկա բանվորական որվա փոխադրելը:
Բանվորական որվա կրծատումը նպատակ
ունի բարձրացնել աշխատանքի արտագրո-
ղականությունը, այդ հիման վրա ընդար-
ձակել արտագրությունը և գործազուրկնե-
րի շարքից նոր բանվորական կագրեր ներգր-
րավել: Բացի դրանից, բանվորական որվա
կրծատումը, հերթափոխության թիվը ավե-
լացնելը նույնպես աշխատողների կագրերի
ավելացման պայման կստեղծեն:

Դրա հետ միասին, քանի աճում է
սոցիալիստական շինարարությունը յերկրի
ներսում և ուժեղանում ե պետական բյու-
ջեն, այնքան ընդարձակվում են գյուղի
ազգաբնակության թվի գերազանցող մասն

ավելի քիչ ազգաբնակություն ունեցող վարերում վերաբնակեցնելու և հողի ոգտագործման ավելի կուտարական ձեվեր կիրառելու պետական միջոցները։ Վորովնետե ազգաբնակության վերաբնակեցումը, վերաբնակեցրածների տնտեսական ամրացումը նոր վարերում և հողագործության մեքենայացումը զգալի միջոցներ են պահանջում, ապա մեր գյուղի վերաբնակեցման թափը կարող ե ընթանալ միայն մեր տնտեսության աճման թափի հետ համահագասար։

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐ

Այս զրուցը մշակելիս, ղեկավարը պետք է, բացի ծրագրում ցուց տված ավանդներից, ոգտագործի նաև տեղական միութենական կազմակերպության տվյալները, վորոնք ցուց են տալիս բանվորական ուժի տատանումները։ Բացարելով կառուցող բանվորների գործազրկության բնույթը, պարզելով բանվորական ուժի աղբյուրը շինարարական արտադրության մեջ՝ զեկութարը պետք է ունկնդիրների գլխավոր ուշադրությունը կենտրոնացնի այս

արմատական պատճառների քննության վրա, վորոնք ԽՍՀՄ-ում, հակառակ ժողովրդական անտեսության անընդհատ աճման, գործազրկություն են առաջացնում։ Այստեղ անհրաժեշտ ե ունկնդիրներին բացատրել այն ընդհանուր խնդիրները, վորոնք կանգնում են գյուղական տնտեսության առաջ՝ իր բանվորական ուժի գործադրությունը ավելացնելու համար և գործազրկության հետագա վերացման գործում յերկրի ինդուստրացման ունեցած նշանակությունը։

ՍՏՈՒԳԻ հարցեր

- 1) Ի՞նչ պատճառներ են գործազրկություն առաջացնում կառուցող բանվորների մեջ։
- 2) Ինչու ԽՍՀՄ-ում, չնայած ժողովրդական տնտեսության զարգացմանը, նկատվում ե գործազրկության աճում։
- 3) Ի՞նչն է հարկադրում գյուղացիներին քաղաք գնալ աշխատանքի։
- 4) Ինչու գործազրկության մեծ մասը աեվագործներ են։
- 5) Ինչու չի կարելի սպասել, վոր

Դործազրկությունը մոտ ապագայում կվերանա:

6. Գործազրկությունը մեղմելու և աստիճանաբար վերացնելու ի՞նչ հնարավորություններ ունենք մենք:

—

ԶՐՈՒՅՑՅ ՀՐԴ

Գործազրկության դեմ մղվող պայմանի միջնցները

ԶՐՈՒՅՑՅ ԾՐԱԳԻՐԸ

Ա. Ժամանելի ժամանակումը

Ծրագրային շինարարությունը պահանջում ե բանվորական ուժի ծրագրային բաշխում: Աշխատանքի բորսաների նշանակությունը: Շինարական սեկցիաները: Թղթակցական կետերի աշխատանքը: Պայքար անկանոն վարձման և հեռացման դեմ: Պայքար արտաժամյա աշխատանքների դեմ: Գործազուրկների հետ մրցող արտելների վնասակարությունը: Միության անդամների վարձման պայմանները: Աշխատանքի բորսաների առաջարկած աշխատանքներից հրաժարվելը:

Ա. Ժամանելի յեվ Եյուրական ոգնություն պետության կողմից:

Գործազուրկների ուսուցում և վերուսուցում: Հասարակական աշխատանքների

կաղմակերպում։ Ինչու միությունը հրաժարվեց կառուցողների համար աշխատանքալին կոլլեկտիվներ կաղմակերպելուց։ Սոցիալական ապահովագրության դրամարկղների միջոցով գործազուրկներին ցուց տված նյութական ոգնությունը։ Գործազուրկ սեղոնայինների ապահովագրության մասին յեղած որենքի նշանակությունը։

ԶՐՈՒՅՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Նախկին զրուցում ցույց տրվեց, վորքանվորական ուժերով առաջ քաղաքներում գործազուրկների կուտակում առաջնալու պատճառներից մեկը հանդիսանում ե սեղոնայինների անկանոն հոսանքը։

Մյուս կողմից, կառուցող, ինչպես և այլ բանվորների, անկտղմակերպ ձեռվ աշխատանքի ընդունելը հնարավորություն չի տալիս աշխատանքներում տեղափորել միության գործազուրկ անդամներին և այն գործազուրկներին, վորոնք իսկապես աշխատանքի կարիք են զգում։ Միաժամանակ պետությունը շահագրգուված ե բանվորական ուժերությանը կարգավորում կարգավորում է Աջականական ուժը գործազուրկներին ցույց տված ոգնությունը (աշխատանքալին և նյութական)։

Վորել ապահովելու համար տնտեսության ծրագրային կառուցման պահանջները։ Գործազուրկներին ոգնություն ցույց տալով, պետությունը, արհեստակցական միությունների հետ միասին, ձգտում ե ունենալ գործազուրկների ճիշտ հաշվառում և ուսումնասիրել նրանց կազմը, առանց վորի հընարավոր չե սիստեմատիկաբար սպասարկել գործազուրկներին, հայտնաբերել գործազրկության և նրան անհրաժեշտ ոգնության չափը։ Այդ պատճառով տվյալ պարագանքի ընթացքում գործազրկության բնույթը վորոշելուց հետո, անհրաժեշտ ե վերլուծել իերկու հիմնական հարց՝ աշխատանքի շուկայի կանոնավորումը, այսինքն, բանվորների վարձան և արձակման կանոնավորումը և պետության կողմից գործազուրկներին ցույց տված ոգնությունը (աշխատանքալին և նյութական)։

Ա. Ժատաների օռկայի կանոնավորումը

Բանվորական ուժի պահանջը և ոռաշարկը կանոնավորող պետական զվարարարներինը հանդիսանում ե Աջականական բորսան, ուր ցուցակագրվում են գործա-

զուրկիները ըստ իրենց արհեստների և
տնտեսական մարմինների դիմումների հի-
ման վրա հաշվառում եւ կատարվում արդյու-
նագործության պահանջած բանվորական
ուժը: Նկատի ունենալով տնտեսական մար-
մինների կողմից բանվորական ուժի ան-
կազմակերպ վարձումը զանազան անհատ
միջնորդների միջոցով, պատահական ձեվով
փողոցում վարձելու գեղագրերը և բանվորա-
կան ուժի տարեցացին կուտակումը անտե-
սական մարմինների ինքնուրույն պահանջ-
ներով, համամիութենական արհմիությունն-
ների VII-րդ համագումարը, Աշխատողկոմի
ղեկուցման հիման վրա, անհրաժեշտ է հա-
մարել ուժեղացնել բանվորական ուժի
կենտրոնացած բաշխումը և բանվորական
ուժի բոլոր գործարքները կենտրոնացնել
բացառապես աշխրջացնել: Պետական
այլ, ինչպես և հասարակական կազմակեր-
պությունների միջնորդական պարտակա-
նությունները պետք եւ արգելվի: Գործա-
դուրկ կառուցողների հաշվառման և նրանց
աշխատանքի ուղարկելու համար, աշխա-
տանքի բորսաներին կից կազմակերպված
են օբնարարական սեկցիաներ, վորոնք

աշխատում են կառուցողների միության
հակողության ներքո: Իսկ Բորսայի աշխա-
տանքները այն աեղեցին մոտեցնելու հա-
մար, ուր կուտակված եւ դուրս գնացող
կառուցող բանվորների հիմնական մասան,
դյուղերում և գյուղական վայրերում կազ-
մակերպվում են թղթակցական կետեր,
վորոնք հայտնում են Բորսային լեզած
աշխատանքների առաջարկների մասին և
նրանցից ցուցմունքներ են ստանում, թե
վորտեղ և ինչպիսի բանվորական ուժ ե
պահանջվում: Թղթակցական կետերի կազ-
մակերպումը թուլացրեց գործազուրկների
անկազմակերպ հոսանքը և ավելացրեց Աշ-
խատանքի Բորսայի միջոցով ընդունվող
կառուցողների թիվը: Միջնորդական աշ-
խատանքները ծավալելու համար, ԽՍՀՄ
1927 թ. Աշխատանքի ֆողովրդական Կոմի-
սարիատը ծախսել է 400.000 ռուբ., վորից
250.000 ռ. Ռ.Խ.Ֆ.Ս.Հ. սահմաններում:
Ռ.Խ.Ֆ.Ս.Հ.-ի սահմաններում 1927 թ. կազ-
մակերպվել են 908 թղթակցական կետեր,
հանդեպ 1928 թվի 682-ի ավելացել են նաև
Աշխատանքի Բորսայի սեկցիաների թիվը,
համեմուլով մինչև 40-ի: Ընդհանուր բյուջեից

կուրս, №. Ս. Հ. Ծ.-ի Ժողկոմխորհը բաց ե
թողել ևս 200.000 ռ. հատկապես կառու-
ցողների աշխատանքի շուկան կանոնավո-
րելու համար: Այդ միջոցները ծախսվել են
գլխավորապես Բորսաների շինարարական
սեկցիաների աշխատանքը ուժեղացնելու
վրա:

Գործազրկության գեմ պայքարելու
դործում մեծ նշանակություն ունի աշխա-
տաղների նիւթ կրնատում կատարելը յեզ
արտադարձա աշխատանքներ թույլ չտալը:
Միաժամանակ գործնականում դեռ ևս գոյու-
թյուն ունի բանվորական ուժի աճուրդներ
սարքելը և պահանջներ անելը, վորը ա-
ռավելություն և տալիս անկազմակերպ
բանվորներին: Աշխատում են կառուցող-
ների արտելներ, փորոնք մրցում են միու-
թյան գործազուրկ անդամների հետ և ի-
րենց գործունելությամբ գժվարացնում են
միության անդամներին աշխատանքներում
տեղափորելը: Այդ պատճառով արենատակ-
ցական միությունը ձգտում է հավաքական
պայմանագրի մեջ մտցնել կետ, փորով վար-
ձողը պարտավորվում է աշխատանքի ըն-
դունել առաջին մերքին սիության գոր-

ծագութեամբներին, կառուցող բանվոր-
ների միության VII-րդ համագումարը հա-
տուկ ուշադրություն է դարձնել գործազըր-
կության դեմ պայքարելու միջոցներին,
Աշխատաղների ուշադրությունը հրավիրելով
բանվորների վարձման և արձակման մեջ
տեղի ունեցող մի շարք թերությունե-
րի վրա:

Անհրաժեշտ և գործազրկությունը
մեղելու համար մղվող պայքարի ժամանակ
ուշադրություն դարձնել նաև գործազուրկ-
ների կազմի վրա: Այս հանգամանքը առան-
ձին նշանակություն ունի, փորովիետե գոր-
ծազուրկները ստանում են նյութական ոգ-
նություն՝ գործազրկության նպաստ: Աշ-
խատանքի Բորսայում քիչ չեն դեպքեր,
յերբ գործազուրկները հրաժարվում են գը-
նալ բորսայի կողմից առաջարկվող, իր մաս-
նագիտությունից ավելի ցածր փորակի և
ավելի ծանր աշխատանքի: Առաջարկվող
աշխատանքից հրաժարվելը գժվարացնում է
Աշխատանքի Բորսաների գործունելությու-
նը, փորովիետե վարձողը, բորսայից չստա-
նալով իրեն հարկավոր բանվորական ուժը,
այդպիսին վերացնում է գրսից: Այդ պատ-

ճառով առաջարկված աշխատանքից հրաժարվելու դեմ վճռական պայքար պետք է մդել: Հրաժարվելը պատճառ կդատնա հրաժարվողին զրկելու գործադրկության համար արվող նպաստից, ապա և բոլորովին հանելու գործադրկությից:

Թեսուրյան կողմից գործազուրկներին տված աշխատանքային յեվ նյուրական ոգնությունը

Բացի կանոնավորելու միջոցներից, պետությունը գործազուրկներին ցուց և տալիս նաև աշխատանքային և նյութական ոգնություն: Յերկրի ինդուստրացումը, ժողովրդական տնտեսության ավելի բարձր տեխնիկայի հիմունքներով վերակառուցումը պահանջում են աշխատաղների փորակի բարձրացում: Կառուցող բանվորների առանձնահատկություններից մեկը ներանց զգալի տնկոսի ցածր վորակի յեվ անվորակ լինելն է: Այդ պատճառով մեծ նշանակություն և մտանում կառուցողների վորակի բարձրացումը: Վորոշ մանագիտություն սովորելը մեղմում է նաև գործադրկությունը բանվորական և գլուղացիական յերիտասարդության մեջ: 1927 թ. վերջում կա-

ռուցողների միության գծով կային 24 շենարական ուսման դպրոցներ 1481 սովորողներով (1926 թ. կար միայն 7 դպրոց), բացի վրանից, հիմնարկներին բըռնչալով կըցված (այն նորման, վոր սահմանված է ձեռնարկությունների համար, նրանց հաշվին սովորելու) յերիտասարդությունը սովորում է աշակերտաների բրիգադներում և 12,000 մարդ ել սովորում են անհատական աշակերտությամբ: Զանազան արհեստների (վոչ միայն կառուցող) գործազուրկների և նըրաց վորակը բարձրացնելու համար Աշխատանքի կենարունական ինստիտուտի կողմից Մոսկվայում, ՀԱՄԿԽ-ի հետ միասին, կազմված են հատուկ վերառւսուցման դասընթացներ, նպատակ ունենալով ավարտողներին տալ տարիֆային ցանցի 5—6 կարգի վորակավորում: 1926 սովորում ելին (թէ Մոսկվայում և թէ գավառներում) 10,000 բանվոր:

Աշխատանքային ոգնության մյուս տեսակը հանդիսանում է հաճախ քաղաքի բարեկարգման, կամուրջների, ձանապարհների վերանորոգման վրա կատարված և այլ հասարակական աշխատանքները: Հա-

սարակական աշխատանքները նույնպես մեծ գեր են խաղում գործազրկությունը մեղմելու գործում, ըստ վորում, մեծ նշանակություն ունի այդպիսի աշխատանքներ կազմակերպելը գույղական վայրերում, աշխատանք տալով ազգաբնակության այն մասին, վորն իր հույսը դրել և քաղաքում աշխատանք ստանալու վրա: 1925/26 թ. հասարակական աշխատանքներում ամեն որ զբաղված էին 30,000 մարդ: Այդ աշխատանքների համար, պետության կողմից գործազրկության գեմ պայքարելու համար հատկացրած 96,7 միլիոն ռուբլի ընդհանուր գումարից բաց եր թողած $10^{1/2}$ միլիոն ռուբլի:

Հնթացիկ 1927/28 անտեսական տարվա Պետպանի ստուգիչ թվերը նախատեսել են գործազրկության գեմ պայքարելու համար բաց թողնվելիք հատուկ գումարները ավելացնել, հասցնելով մինչև 132 միլիոնի: Հասարակական աշխատանքները նույնատեսնված եր ավելացնել $42,7^{0/0}$ -ով:

Գործազրկություն աշխատանքավին ուղնություն ցուց տեսակներից մեկն ել աշխալլեկտիվներ կազմակերպելն եւ Սա-

կայն աշխալլեկտիվները պետք ե լինեն միայն ժամանակավոր կազմակերպություն: Ներ, վորոնք գործազրկություններին ժամանակավոր վաստակ են տալիս նրանց գործազրկության սուր շրջանում, մինչև նրանց աշխատանք ճարել, և վոչ թե մշտական գործող կազմակերպություններ են, իրենց մշտական «գործազրկությունների» կաղըերով: Գործնականում կառուցող բանվորների աշխալլեկտիվները աստիճանաբար դարձել են մշտական գործող, մասամբ միջնորդ, մասսամբ տնտեսական կազմակերպություններ: Ոգտվելով սոցիալական ապահովագրման, հարկերի և այլն արտօնություններով, ինչպես և հնարավորություն ունենալով աշխատողներին ցածր աշխատափարձ վճարելու, աշխալլեկտիվները սկսեցին մրգել շինարարական կազմակերպությունների և աշխարսայում գտնվող կառուցող գործազրկությունների հետ, ընդունելով աշխատանքավին արտելների բնուլիթ: Կառուցողների միության ՎԼ-ըդ համագումարը հետագայում այդպիսի կոլեկտիվներ կազմակերպելը գլուխով աննպատակահարմար:

Գործազրկության գեմ պայքարելու

համար պետության կողմից ծախսված միջոցների ընդհանուր գումարը 1925/26 թ.
կազմում եր 97,799 հազար ռուբլի, այսինքն
50⁰/₀-ով ավել, քան նախընթաց տարում։
Այս գումարի մեջ են մասնում, ինչպես գործադրություններին աշխատանքային ոգնություն
ցուց տալու հետ կապված ծախսերը, նույնապես և անմիջականորեն դրամական ոգնությունը, վոր աված և նրանց սոցալգանձարկներից տրված նպաստի կամ աշխակույթի մեջ և հասրակական աշխատանքներում՝ աշխատավարձի ձեվով։

Գործադրություն ցուց տված դրամական ոգնության հիմնուկան տեսակը, սոցալգանձարկներից սոցիալական ապահովագրության կարգով տրված նպաստն է։ Սոցիալական ապահովագրման իրավունքով ոգտվում են այն անձինք, վորոնց ապրուստի միակ միջոցը կազմում են նրանց վարձու աշխատանքը և վորոնք, նախքան աշխատանքի ընդհանուման պատճառներ առաջ գալը (ժամանակավորապես աշխատունակությունը կորցնել, հաշմանդամություն, գործազրկություն), աշխատել են վարձու և ապահովագրված են լեղել։

Այդ պատճառով սոցալգանձարկողից նպաստ ստանալու իրավունքով ոգտվում են վոչ բոլոր գործազրությունները։ միան նրանք, վորոնք առաջ աշխատել են վարձու և գործազրկությունից Յ ամիս անց նօրից սկսել են աշխատանքի փնտրել, ցուցակագրվել են Սշխատանքի Բորսայում (իսկ ուր աշխատանքի բորսաներ չըկան, արհմիությունում)։

Սոցիալական ապահովագրության կարգով տված նպաստը միանման չե։ Նրա չափը կախված է գործազրությի վորակից և այն վայրի միջին աշխատավարձի չափից և ապրուստի թանգությունից, վորտեղ տրվում են նպաստը։

Բայց վորակավորման, գործազրությունները բաժանվում են Յ կարգի։ I-ին կարգին պահանում են կառուցղական արտադրության վորակավոր բանվորները՝ սկսած 8-րդ տարիիցին կարգից և բարձր, շինարական նյութերի արդյունագործության վորակավոր բանվորները, սկսած 7-րդ կարգից։ II-րդ կարգին պատկանում են կառուցղական արտադրության կիսավորակավոր բանվորները 5-րդից մինչև 7-րդ կարգ և շինարա-

համար պետության կողմից ծախսված միջոցների ընդհանուր գումարը 1925/26 թ.
կազմում եր 97,799 հազար ռուբլի, այսինքն
50⁰/₀-ով ավել, քան նախընթաց տարում։
Այս գումարի մեջ են մասնում, ինչպես գործադրություններին աշխատանքային ոգնություն
ցուց տալու հետ կապված ծախսերը, նույնապես և անմիջականորեն դրամական ոգնությունը, վոր աված և նրանց սոցալգանձարկներից տրված նպաստի կամ աշխակույթի մեջ և հասրակական աշխատանքներում աշխատավարձի ձեվով։

Գործադրություն ցուց տված դրամական ոգնության հիմնուկան տեսակը, սոցալգանձարկներից սոցիալական ապահովագրության կարգով տրված նպաստն է։ Սոցիալական ապահովագրման իրավունքով ոգտվում են այն անձինք, վորոնց ապրուստի միակ միջոցը կազմում ե նրանց վարձու աշխատանքը և վորոնք, նախքան աշխատանքի ընդհանուման պատճառներ առաջ գալը (ժամանակավորապես աշխատունակությունը կորցնել, հաշմանդամություն, գործազրկություն), աշխատել են վարձու և ապահովագրված են լեղել։

Այդ պատճառով սոցալգանձարկողից նպաստ ստանալու իրավունքով ոգտվում են վոչ բոլոր գործազրությունները։ միան նրանք, վորոնք առաջ աշխատել են վարձու և գործազրկությունից Յ ամիս անց նօրից սկսել են աշխատանքի փնտրել, ցուցակագրվել են Սշխատանքի Բորսայում (իսկ ուր աշխատանքի բորսաներ չըկան, արհմիությունում)։

Սոցիալական ապահովագրության կարգով տված նպաստը միանման չե։ Նրա չափը կախված է գործազրությի վորակից և այն վայրի միջին աշխատավարձի չափից և ապրուստի թանգությունից, վորտեղ տրվում ե նպաստը։

Բայց վորակավորման, գործազրությունները բաժանվում են Յ կարգի։ I-ին կարգին պահանում են կառուցողական արտադրության վորակավոր բանվորները՝ սկսած 8-րդ տարիիցին կարգից և բարձր, շինարական նյութերի արդյունագործության վորակավոր բանվորները, սկսած 7-րդ կարգից։ II-րդ կարգին պատկանում են կառուցողական արտադրության կիսավորակավոր բանվորները 5-րդից մինչև 7-րդ կարգ և շինարա-

բական նյութերի արդյունագործության
 5—6 կարգի բանվորները: Վերջապես III-րդ
 կարգին պատկանում են 5-րդ կարգից ցած
 անվորակավոր բանվորները: Նայած թե վոր
 գոտու մեջ և մտնում սոցապգանձարկղը,
 I կարգի նպաստը տատանվում է 12 ռ.
 մինչև 27 ռ. մեջ, II-րդ կարգինը՝ 9 մինչև
 20 ռ. մեջ և III-րդ կարգինը՝ 7 մինչև 15
 ռ. 50 կ. մեջ: Ծառայողների նպաստի չափը
 նույնպես կախված է նըանց վորակից:

I-ին կարգի նպաստ ստանում են ճար-
 տարագետները, տեխնիկները, վարպետները,
 տասնապետները, II-րդ կարգի՝ այն ծա-
 ռայողները, վորոնք 200 ոուրլուց ցած ոո-
 ճիկ չեն ստացել I-ին գոտում և 85 ռ.
 վոչ պակաս՝ IV-րդ գոտում: III-րդ կար-
 գով ֆիացած բոլորը:

I-ին և II-րդ կարգի գործադուրկների
 նպաստ սպանալու իրավունքը վորոշելու հա-
 մար, ստաժը հաստատող փաստաթղթեր
 չեն պահանջվում: Անհրաժեշտ ե միայն հաս-
 տատել, վոր գործազուրկը, մինչև գործա-
 դուրկ դառնալը, իսկապես աշխատել և
 վարձով: Չե վոր վորակազմումը միանգա-
 մից ձեռք չի բերվում. վորոշ վորակազ-

քում ունենալը ինքն ըստ ինքյան հաստա-
 տում և նրա աշխատանքի ստաժը: Անվո-
 րակ բանվոր գործազուրկ միության ան-
 դամները (III-րդ կարգ) պետք է հաստա-
 տեն 6 ամսվա աշխատանքի ստաժ, նախքան
 գործազրկությունը, իսկ II-րդ և III-րդ կարգի
 դասված միության անդամ գործազուրկ ծա-
 ռայողներից պահանջվում է 2 տարվա ստաժ:
 Մնացած բոլոր գործազրկություններից պահանջ-
 վում է 3 տարվա աշխատանքի ստաժ:

Վորպես ընդհանուր որենք, գործազր-
 կության նպաստը տրվում է վոչ ավելքան
 9 ամիս, մեկ տարվա գործազրկության ըն-
 թացքում: Այդ ժամանակաշրջանից հետո
 նպաստը դադարեցվում է և կարող ենորոգ-
 վել գործազրկության հաջորդ տարվանից:

Գործազրկության մեկ շրջանի ընթաց-
 քում գործազուրկը իրավունք ունի ստա-
 նալու վոչ ավելի քան 18 ամսվա նպաստի
 վճարում: Բացի հիմնական նպաստից, գոր-
 ծագուրկը կարող է ստանալ հավելյալ
 նպաստ իր ինսամքի տակ գոնվող յերեխա-
 ների և ծերացած ծնողների (հայրը 55 տ.
 և մայրը 50 տ.) համար: Ընտանական հա-
 վելումները տրվում են հիմնական նպաս-

տի 15⁰/₀-ի չափով իր խնամքի տակ լեղած մեկ անդամի համար, 25⁰/₀-ի չափով 2 անգամի համար և 35⁰/₀-ի չափով 3 և ավելի անդամների համար:

Արտադրության առանձնահատուկ պայմանների շնորհիվ, վորոշ կարգի կառուցողներ գործազրկության նպաստ ստանում են հաշուուկ կանոններով: Վորոշ կառուցողական աշխատանքների հիմնական տարրերությունը նրանց սեղոնալին լինեն եւ, այդ պատճառով ել գործազրկության դեպքում ապահովելու ընդհանուր կանոնները չեն կարող գործազրկել բոլոր դեպքերի և ամեն կարդի կառուցուղների համար:

Կառուցողները (նույն թվում և շինարարական նյութերի արտադրման բանվորները) գործազրկության դեպքում ապահովելու տեսակետից բաժանվում են 3 խմբի:

1) Այն աշխատանքներում զբաղված բանվորները, վորոնց վրա տարածվում են մասնակի ապահովագրությունը (մասնակի ապահովագրությունը տարածվում են միայն առանձին ցուցակներում ցույց տված աշխատանքների վրա (№ 1 3/III 927 թ. և № 2 9/V. 27 թ)): Այս խումբ բանվորները

գործազրկության նպաստ ստանալու իրավունք չունեն:

2) Լրիվ ապահովագրված բանվորները, վորոնց աշխատանքները սակայն ունի անպայման սեղոնալին ընդհատումներ (մեռած տեղոն): Այս խմբին պատկանուն են հետեւյալ արհեստները՝ ձյութաքանները (դրսի աշխատանքներում), խճոնագործները, հողափորները, վորմագիրները, ձիավարները, խծուծագործները, տանիքագործերը, կամուրջագործները, ձեռնասալակ քաշողները և ճանապարհ խճողները:

Այս արհեստների տերերը սովորաբար աշխատում են միայն շինարարական սեղոնում, վորը վերջացնելուց հետո չեն կարող իրենց մասնագիտության գործ ճարել մինչև նոր շինարարական սեղոնը: Նրանցից շատերը նույնիսկ մեռած սեղոնի ժամանակ գործ չեն ել փնտրում, այլ գնում են գյուղ: Գործ վնատրող գործագուրեկներին ապահովող ապահովագրական մարմինները չեն կարող ընդհանուր հիմունքներով լրիվ ապահովագրել այնպիսի խումբ բանվորներին, վորոնք ամբողջ մեռած սեղոնի ընթացքում անպայման գործազուրկ են մնալու: Այդ պատճառով

վերը հիշված արհեստները գործազրկության
դեպքում ապահովագրվում են սահմանափառ-
կումներով: Այդ խմբի այն գործազրկությու-
ները, վորոնք կապ ունեն գյուղի հետ և շի-
նարարական սեղոնը վերջացնելուց հետո
գյուղ են վերադառնում, մեռած սե-
զոնի ընթացքում չեն ապահովագրվում: Սա-
կայն աշխատտնքի սեղոնի ժամանակ, յեթե
այդպիսի բանվորը քաղաք գալով վորեից ե
պատճառով գործազրկ ե մնում, իրավունք
ունի նպաստ ստանալու, բայց վոչ ավել
քան 2 ամիս, սեղոնի ընթացքում: Աշխա-
տանքի Բորսայում այդ խմբի ցուցակագր-
ման համար ժամանակ սահմանված ե 5
ամիս, աշխատանքները վերջացնելուց հետո:

Բայց գյուղի հետ կապ ունեն վոչ բո-
լոր բանվորները: Հիշված խմբի մի քանի
կառուցողներ մշտապես ապրում են քա-
ղաքում, կապ չունենալով գյուղական տրն-
տեսության հետ: Մեր ապահովագրական
որենսադրությունը այդ դրությունը հաշվի
յի առնում ե վերոհիշյալ սեղոնային արհեստ-
ների տեր բանվորները ապահովագրվում են
հետեւյալ ձեռվ՝ ստանում են նպաստ 3 ամ-
սից վոչ ավել մեռած սեղոնի ընթացքում,

իսկ սեղոնի ընթացքում գործազրկության
դեպքում ընդհանուր հիմունքներով, այն
հաշվով, վոր մեկ տարվա ընթացքում ստա-
ցած ամսականնպաստի ընդհանուր թիվը 9
ամսից ավել չլինի: Սեղոնի սկսվելու և վեր-
ջանալու ժամկետները սահմանվում են տե-
ղերում, համաձայն տեղական կիմայական
և արտադրական պայմանների՝ Հանրապե-
տական կամ գավառի սոցագունաքարկղների
և միջմիութենական կազմակերպություն-
ների փոխադարձ համաձայնությամբ:

3. Մնացած գործազրուրկ կառուցող-
ները ապահովագրվում են գործազրության
նպաստով ընդհանուր հեմունքներով:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐ

Այս պարապմունքի ընթացքում դեկա-
վարը սետք ե ուկնսիրների ուշադրությու-
նը կենտրոնացնի պետության կողմից աշ-
խատանքի շուկան կանոնավորելու կարեվո-
րության վրա: Անհրաժեշտ ե բացատրել,
վոր Աշխատանքի Բորսայից գուրս աշխա-
տող վարձվելը քայլայում ե գործազրկու-
թյունը մեղմելու համար ձեռք առած մի-
ջոցները, վորովհետև հնարավություն չլ-

տալիս ճիշտ կերպով հաշվառելու գործազրկության և նրա վերացման չափը։ Զրուցից առաջին մասը պետք է տանել միության Կինտկոմի (1926 թ). III-րդ նստաշրջանի վորոշումների, միության VΙ-րդ Համագումարի վորոշումների հիման վրա, ողբագործելով իր շրջանի տեղական նյութերը։

Զրուցիցի յերկրորդ մասը, լուսաբանելով հանդերձ պետության կողմից գործադուրկներին ցուց տրվող աշխատանքային ոգնության առանձին ձեվերը, գլխավորապես պետք ե կենարոնացվի սոցազգանձարկների միջոցով գործազուրկներին նյութական ապահովության վերաբերյալ նոր որենքի վերլուծման վրա։ Արենքի վերլուծման ժաման պետք ե ընդգծել և բացատրել որենքի դասակարգային ելությունը, վորի ուշագրության առարկան հանդիսանում ե գլխավորապես գյուղական չքավորությունը և գյուղի կիսապրոլետարական շերտերը։

ՍՅՈՒԳԻ ԽԱՐԳԵՐ

1) Ինչու յեն կազմակերպվել Աշխատանքի Բորսաները։

2) Ինչու վոչ վոք, բացի Աշխատանքի բորսաներից և նրանց մարմիններից, մեզանում իրավունք չունի միջնորդի պարտականություններ կատարելու։

3) Ինչու թուլարելի չե գործազուրկներին առաջարկված աշխատանքից հրաժարվել։

4) Ի՞նչ նշանակություն ունի գործազուրկների և անշափահասների վերուսուցումը և վորակավորման բարձրացումը։

5) Ի՞նչ աշխատանքալին ոգնություն և ցուց տալիս գործազուրկներին Խորհրդակին պետությունը։

6) Ինչու Աշխատանքի Բորսայում ցուցակագրված բոլոր գործազուրկները գործազրկության նպաստ չեն ստանում։

ԶՐՈՒՅՑ Յ. ԻԴ

Միութենական ոգնություն գործազուրկ-
ներն

ԶՐՈՒՅՑԻ ԾՐԱԳԻՐԸ

Գործազուրկների նյութական ոգնությունը

Գործազուրկների ոգնության ֆոնդու-
մոնդի միջոցները։ Ֆոնդին արված հատ-
կացումների կարգը։ Նպաստներ տալու կար-
գը։ Ումը նպաստ չի տրվում։ Ճանապար-
հածախս տալը։ Ֆոնդի նախահաշվալին ծախ-
սումը։ Կամագ. ք. 0/0.-ին հատկացումները
(ԽՍՀՄ-ի Միությունների VII. րդ համագու-
մարի և միութենական կենտրոնի IV. րդ
հստաշը ջանի վորոշումները)։

Պրոֆասիատանք գործազուրկների մեջ.

Գործազուրկների միության անդամ լի-
նելը։ Միության մեջ ընդունելու պայ-
մանները։ Գործազրկության գեպքում միու-
թյան անդամ մնալու պայմանները։ Միու-
թյան կողմից գործազուրկների կուլտուր-
կենցաղային սպասարկումը, կազմակերպչա-

կան աշխատանքը միության գործազուրկ
անդամների մեջ։ Ներգրավումը միության
ընդհանուր աշխատանքներում։ Մասնակցու-
թյուն միութենական համագումարներում և
կոնֆերանսներում։ Միութենական ստորա-
դաս բջիջները գործազուրկների մեջ։ Ով-
ե սպասարկում գործազուրկներին։

ԶՐՈՒՅՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

Յեթե նախորդ զրույցներում վերլու-
ծվում ելին պետության կողմից գործա-
զուրկներին ցուց տված ոգնության բնույ-
թը և պայմանները, ապա այս պարապմուն-
քով պետք ե լուսաբանվեն միութենական
աշխատանքների ձեվերը միության գործա-
զուրկ անդամների մեջ։ Միության անդա-
մը, անկախ այն հանգամանքից, աշխատե-
լու յե արդյոք նա, թե գործազուրկ ե, մը-
նում ե միության անդամ և արհեստակցա-
կան կազմակերպությունները իրանց գոր-
ծունելությամբ գործազուրկ անդամին կա-
պում են մնացած միութենական ուսսալի
հետ, սապասարկելով նրանց նյութական և
կուլտուրական կարիքները։ Այդ պատճա-
ճով այս պարապմունքը պարունակում ե իր

մեջ յերկու հիմնական հարց՝ գործազուրկ-
ների նյութական ոգնությունը և գործա-
զուրկների միութենական ոպասարկումը:

Գործազուրկների նյութական ոգնությունը

Միությունների կողմից իր գործա-
զուրկ անդամներին նյութական ոգնու-
թյուն ցույց տալու հիմնական տեսակը դը-
րամական նպաստն եւ Վորոշ գեղքերում
ցույց եւ տրվում նաև ոգնության բնակա-
նով: Այդ նպատակով միության անդամավը-
ճարնը ի 10⁰/₀-հատկացումից, աշխատավար-
ձից արված կամավոր հատկացումներից
(1/2⁰/₀-ից վոչ ավելի) և զանազան պատա-
հական յեկամուտներից, կազմակերպվում ե
գործազուրկների ոգնության ժոնդ: Այդ
ֆոնդի նպաստներով կարող են ոգտվել
միության անդամ բոլոր գործազուրկները,
նույն թվում նաև սոցապգանձարկից դը-
րամական նպաստ ստացողները: Առաջին
հերթին նպաստ տրվում եւ ամբողջ տարին քա-
ղաքում ապրող գործազուրկ բանվորներին
և սեղոնալին գործազուրկներին, շինարա-
րական սեղոնի սկզբում: Նպաստ ստանա-
նալու համար անհրաժեշտ եւ ունենալ միու-

թենական ստաժ (մեկ տարուց վոչ պա-
կաս), պետք եւ անպայման վճարված լինի և
ամսվա անդամվճարը: Սահմանելով միու-
թենական ստաժը և աշխատողների կատե-
գորիաները ըստ վորակավորման, միությու-
նը սահմանափակում եւ իր ոգնությունը,
ցույց տալով այդպիսին միության այն ան-
դամներին, վորոնք չեն կարել իրենց կապը
միության հետ և վորոնց համար միության
անդամ լինելը պատահական բնույթ չի կը-
րել: Վորակես որինակ, կարելի յե ցույց տալ
հետեւալ գեղքը՝ սեղոննայինը ընդունվում
եւ միության շարքերը և մի ամսից հետո
թողնում եւ աշխատանքները, հույսը զնելով
միության ոգնության վրա այդպիսի գոր-
ծազուրկներին միությունը ոգնություն չի
ցույց տալիս:

Բացի դրանից, աշխատանքային արտել-
ներում և աշխատանքային արտելներում կամ հասա-
րակական աշխատանքներում գտնված գոր-
ծազուրկներին, այսինքն նրանց, վորոնք
արդեն մեռած սեղոնի ընթացքում, թեկուզ
և ժամանակավոր աշխատանքով ապահովված
են, միությունը նույնպես նյութական ա-
ջակցություն չի ցույց տալիս:

1926թ. գործազուրկների ոգնության ամբողջ ֆոնդը կազմում եր 1,962,237 ռ. վորից 502,271 ռ. կազմում ելին անդամավրաներից արված հատկացումները (8%) և 829,086 — կամավոր հատկացումները. Այդ ֆոնդից 927,399 ռ. տված ե վերադարձվող և անվերադարձ նպաստ. 1927թ. ընդհանուր միջոցներից գործազուրկների ֆոնդի հատկացումները բարձրացավ մինչև 110% :

Բացի դրամական ոգնությունից, արդգում ե նաև նպաստ գործազուրկի մեկ վարից մյուսը փոխադրվելու դեպքում — փոխադրվելու նպաստ. Այդ նպաստը կառուցողների համար մեծ նշանակություն ունի, գորովհետեւ գործազուրկների համարյա 50% -ը ստիված ե այլ վայրերում աշխատանք վիճակի. Փոխադրական նպաստ արվում ե գործազուրկներին տարին 2 անդամից վոչ ավել և այն ել այն դեպքում, յեթե աշխատանքի բորսան կամ միջնորդ բարուն աշխատանք ե առաջարկում մյուս քաղաքում, կամ հաստատվում ե, վոր ուրիշ քաղաքում հնարավոր ե աշխատանք գանել. Սակայն նպաստի չափը, վորը գորոշվում ե յերկա-

թուղարին տոմսի արժեքով, չպետք ե ավելի լինի 700 վերստ տարածություն անցնելու համար պահանջվող յերկաթուղարին ծախքերից. Փոխադրական նպաստ տալիս ե նաև պետությունը. Այսպես, այն տնտեմարմինները, վորոնք իրենց հիմնարկների համար բանվորական ուժ վարձում են այլ շրջաններից, նրանց ճանապարհածախսը վճարում են իրենք, այսինքն նրանց փոխադրածախքը կատարվում ե տնտեսական հիմնարկների հաշվին. Բացի դրանից, աշխատանքի բորսաները գործազուրկին յերկաթուղու տոմսի արժեքի 50% զեղչով «լիտեր» են տելիս, յեթե գործազուրկը յերկար ժամանակ աշխատանքի բորսայում հաշվի առնը ված լինելով, չի կարողանում իր համար աշխատանք գտնել և ցանկանում ե փոխադրվել ուրիշ տեղ աշխատանք փնտրելու. Գործազուրկների ոգնության ֆոնդի հսկայական կարելությունը պահանջում ե, վոր ֆոնդի դրամը խիստ զգուշ և ուշադիր կերպով ծախսվի. Այդ պատճառով ֆոնդի դրամական գործարքները կատարվում են խիստ նախահաշվարկին կարգով և ինքը ֆոնդը կենտրոնացված ե և գտնվում ե միության

կենտվարչություններին, շրջանալին և նա-
հանդալին բաժիններին կից:

Միության կենտկոմին կից կազմված
ֆոնդի միջոցները ծախսվում են այն տե-
ղական միության կազմակերպություններին
ոգնություն ցուց տալու համար, ուր գոր-
ծազրկությունը ավելի շատե և վորոնք գոր-
ծազրկների ոգնության բավականաչափ
ուժեղ ֆոնդ չունեն:

Պրոֆասիատանքը գործազուրկների մեջ

Արհեստակցական միությունը աշխա-
տանք և տանում վոչ միայն իր անդամնե-
րի մեջ, այլև մնացած անքողջ բանվորական
մասսալի մեջ, թեև նրանք միության շար-
քերում չեն գտնվում: Իր աշխատանքով
միությունը պարզաբանում է վոչ միութ-
յան անդամներին, թե ինչ կարեռաւթյուն
և անհրաժեշտություն ունի անդամ լինել
այնպիսի հասարակական պրոլետարական
կազմակերպության, ինչպիսին արհեստակ-
ցական միությունն եւ: Միության անդամ
դառնալու համար, առաջուց միության անդամ
չեղած գործազրկը պետք է աշխատանք
ստանա, վորովիետե արհեստակցական մի-

ությունը վարձու աշխատողների կազմա-
կերպություն եւ: Միության շարքերն ըն-
դունվելու համար առաջադրվող այս պայ-
մանը ապահովում է միությունը՝ պրոե-
աարական կազմակերպությունը՝ բանվորա-
կան դասակարգի հետ վոչ մի ընդհանուր
բան չունեցող պատահական տարրերով
ապականվելուց:

Ճիշտ ե, այս գեղքում ստեղծվում է մի
տեսակ կախարդական ողակ՝ «աշխատանքի
ընդունվելու համար առաջին հերթին պետք
է լինել միության անդամ, իսկ միության
անդամ լինելու համար պետք է աշխատանք
ունենալ»: Ուստի ՀԱՄԿԽ ի 6-րդ գումար-
ման 11-րդ նստաշրջանը (1926 փետրվար)
հնարավոր համարեց այս կամ այն պատ-
ճառներով միության հետ կապերը կարած
նախկին վորակավոր բանվորներին միու-
թյան շարքերը քաշելու համար՝ միության
մեջ ընդունել աշխատանքի բորսաներին
կից կազմակերպված աշխատանքալին կոլ-
լեկտիվներում աշխատողներին, յեթե նը-
րանք կոլեկտիվում աշխատում են անընդ-
հատ Յ ամիս և վորոշ աշխատավարձ են
ստանում: Միության անդամը կարող է

միությունից դուրս մնալ, յեթե նա կապ-
ված չի լինի իր կազմակերպության հետ,
այդ պատճառով գործազուրկների հա-
մար պարտապիր և կանոնավորապես ցու-
ցակագրվել միութենական մարմիններում
(բանկոմներում, յեթե այդպիսիները սպա-
սարկում են նաև գործազուրկներին, կամ
միության վարչություններում):

Գործազուրկների մեջ միության տա-
րած աշխատանքը մեծ նշանակություն ու-
նի միության անդամների համար: Պահպա-
նելով կապը միութերական կազմակեր-
պությունների հետ, գործազուրկը նրա մի-
ջոցով մասնակցում է սոցիալիզմի կառուց-
ման մեծ աշխատանքին:

Գործազուրկների մեջ տարած կու-
տուրական աշխատանքը աջակցում է նրանց
դասակարգային կուլտուրական զարգացմա-
նը, դաստիարակում և հասարակական սո-
վորությունները, կոլլեկտիվ աշխատանքի
անհրաժեշտությունը: Միությունը գործա-
զուրկների կուլտուրակենցաղային սպասարկ-
ման աշխատանքները ծավալում ե սե-
զոնի սկզբում, սեզոնայինների կուտակման
ժոմենտին և սիստեմատիկաբար շարունա-

կում և ամբողջ տարին, քաղաքում ապրող
գործազուրկների մեջ: Միութենական մար-
մինները, Աշխաղկոմատի հետ միասին,
վաղորոք հոգ են տանում գիշերելու տե-
ղեր, հանրային ճաշարաններ, տեղեկատու
բյուրոններ, հանրակացարաններ կազմակեր-
պելու: Կարմիր անկյունների և ակումբների
աշխատանքները հարմարեցվում են ձրիա-
բար սպասարկելու գործազուրկներին, վո-
րովինետև գործազուրկների համար հատուկ
ակումբներ չեն կազմակերպվում: Կուլտուր-
կրթական աշխատանքներ տարվում են նաև
աշխատանքային բորսաներում, վորոնց կար-
միր անկյուններում կազմակերպվում են զր-
բուլիցներ, դասախոսություններ, բարձրա-
ձայն ընթերցումներ, հարց ու պատասխանի-
ժամեր, եքսկուրսայներ և այլն: Այսպես,
այս բոլոր աշխատանքները կապված
են աշխատանքի բորսաների միում աշխա-
տանքների հետ: Միությունները ակտիվ
մասնակցություն են ունենում աշխատանքի
բորսաների կոմիտեների, առանձին արհեստ-
ների սեկցիաների աշխատանքներում և
այլն:

Գործազուրկների կապը իրենց միության հետ ամրացնելու համար, կանոնավորագես լերկու ամիսը մեկ անգամից վոչ պակաս, հրավիրվում են գործազուրկների ընդհանուր ժողովներ, ուր քննության են առնվում վոչ միայն նյութական ոգնության, այլև համամիութենական բնույթ կրող հարցեր և միութենական մարմինների հաշվետվություններ։ Գործազուրկ լինելը չի զրկում միության անդամին համագումարներում և կոնֆերանսներում մասնակցելու իրավունքից։

Գործազուրկների սպասարկման աշխատանքները տանում են միության բաժինները։ Այս աշխատանքը կարելի յե հանձնարարել նաև ստորադաս բջիջներին (բանկոմիներին, գործարկոմներին), բայց տվյալ ստորադաս բջիջի ընտրությանը նույն ձեռնարկության մեջ չաշխատող գործազուրկները չեն մասնակցում։ Հասարակական աշխատանքներուն և աշխատանքային կոլեկտիվներում՝ այդպիսիների կազմի շարունակական փոփոխության հետևանքով ստորադաս բջիջներ չեն կազմակերպվում։

Աշխատանքը տանում ե միութենական կազմակերպության ապահարատը։ Այսպիսով, քանի վոր մոտ ապագայում, առաջին զրույցում բացատրված պատճառներով, չի կարելի սպասել, վոր գործազրկությունը վերանա, պետությունը և արհեստական միությունները ակտիվ մասնակցություն են ունենում գործազուրկներին ոգնություն ցուց տալու, գործազրկությունը մեղմելու և գործազուրկների նյութական ու կուլտուրական պահանջները բավարարելու գործում։

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐ

Այս զրույցը թեմատիկական խմբակի ծրագրի մեջ չեզրափակող զրուց ե։ Բացատրելով արհեստական միությունների գերը միության թե աշխատող ե թե գործազուրկ անդամների սպասարկման գործում, հատուկ ուշադրություն պետք ե դարձնել միության անդամության հարցին։ Զրուցի լնթացքում պետք ե բացատրել միության դասակարգական քաղաքականությունը, գորպես պրոլետարական կազմակերպության, վորը նա անց ե կացնում թե


միության անդամության հարցում և թե
գործազուրկներին նյութական-դրամական
ոգնություն ցուց տալու խնդրում:

Հիշեցնելով ունկնդիրներին նախորդ
զըռուցի բովանդակությունը, անհրաժեշտ ե
ևս մեկ անդամ ընդգծել, վոր սեղոնալին-
ների ապահովագրման և նրանց ապահովե-
րու որենքը յերբեք չի հակասում միության
քաղաքանությանը: Զրուցի յերկրորդ մա-
սում պետք ե ունկնդիրների ուշագրու-
թյունը կենտրոնացնել միության զործա-
զուրկ անդամների իրենց միության հետ
կապ պահպանելու անհրաժեշտության,
գործազուրկների իրենց ժողովների միջոցով
համարիութենական հարցերի լուծման
մասնակցելու նշանակության, միութենա-
կան համագումարներին և կոնֆերանսնե-
րին մասնակցելու վրա և այն: Վերջում
հարկավոր ե ամփոփել գործազրկության
հարցի քննությունը, ընդգծելով, վոր թե
խորհրդակին պետությունը և թե արհես-
տակցական միությունները, մշտապես սպա-
սարկելով գործազուրկներին նրանց նյու-
թական և աշխատանքային, նույնպես և
կենցաղային ու կուլտուրական բնագավառ-

ներում, միաժամանակ իրենց ամբողջ աշ-
խատանքի կենտրոն դարձնում են գործա-
զուրկությունը աստիճանաբար վերացնելու
խնդիրը:

Վերատուգիչ հարցեր

- 1). Ի՞նչ միջոցներից են միությաննե-
րը ոգնում գործազուրկներին:
- 2). Ի՞նչ ե նշանակում տեղափոխու-
թյան նպաստ:
- 3). Ինչու գործազուրկ վոչ միության
անդամները չեն կարող ընդունվել միության
մեջ, քանի չեն ընդունվել աշխատանքի:
- 4). Ինչու պետք ե գործազուրկ միու-
թյան անդամը ցուցակագրվի միության մեջ:
- 5). Միության գործազուրկ անդամնե-
րըն ում կողմից են ապահովագրվում:
- 6). Ինչու հասարակական աշխատան-
քներում արհմիութենական բջիջներ չեն
ստեղծվում:
- 7). Միության գործազուրկ անդամնե-
րըն ինչպես կարող են մասնակցել համա-
միութենական կյանքին:





ՀՀ Ազգային գրադարան



NL0196804

4
Сат910

БИБЛИОТЕКА
УНИВЕРСИТЕТУ
СОЮЗНОЕ ДЕНИИ
Академии Наук
СССР

